

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
2 հոկտեմբերի 2009 թ.
Պետական գրանցման թիվ 33009332

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

17 սեպտեմբերի 2009 թ.
ք. Երևան

N 3-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԵՎ «ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ» ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ, ՇՆՈՐՀԱԳՐԻ, ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ժ.4» և «ժ.5» կետերի համաձայն՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» և «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչումների շնորհման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչման կրծքանշանի, վկայականի ու շնորհագրի և «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչման կրծքանշանի ու վկայականի ձևերը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ռ. Հովհաննիսյանին՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն յոթնօրյա ժամկետում սույն հրամանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանին:

Նախարար

Ա. Գրիգորյան

Կ Ա Ր Գ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԵՎ «ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ» ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» և «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչումների ներկայացման, շնորհման կարգը և պայմանները:

2. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» և «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչումները սահմանված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի վաստակաշատ աշխատողներին ու միջազգային պաշտոնական մրցումներում առավել բարձր արդյունքների հասած մարզիկներին խրախուսելու նպատակով և շնորհվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարի հրամանով:

2. ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչումը շնորհվում է հետևյալ մարմինների ներկայացմամբ՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների.
- 2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների.
- 3) Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների.
- 4) Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզաձևերի ազգային ֆեդերացիաների.
- 5) հանրապետական մարզական հասարակական կազմակերպությունների.
- 6) Լիազոր մարմնի ենթակայության մարզական կազմակերպությունների:

4. «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչումը շնորհվում է մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ներկայացմամբ:

5. Կոչումների շնորհման նպատակով սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերում նշված մարմինները Լիազոր մարմնին ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- 1) ներկայացման թերթիկ,
- 2) անձնագրի պատճեն,
- 3) բնութագիր-երաշխավորագիր,
- 4) 2 գունավոր լուսանկար (3 x 4 չափսի),

5) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչման համար,

6) մարզական արդյունքները հաստատող փաստաթուղթ՝ «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչման համար:

6. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» և «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչումների ներկայացման թերթիկների ձևը հաստատում է Լիազոր մարմինը:

3. ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ, ՄԵՐԺՄԱՆ ԿԱՄ ԶՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

7. Կոչումների շնորհման համար թեկնածուների հաշվառման, փաստաթղթերի հավաքման և կոչում շնորհելու համար առաջարկություն ներկայացնելու նպատակով Լիազոր մարմնի ղեկավարի կողմից ստեղծվում է հանձնաժողով, որի 11 անդամներից բաղկացած անհատական կազմը և

գործունեության կարգը հաստատում է Լիազոր մարմնի ղեկավարը:

8. Հանձնաժողովի կազմը ձևավորվում է Լիազոր մարմնի՝ վեց, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի՝ երկու և մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ու մարզական հասարակական կազմակերպությունների երեք ներկայացուցիչներից:

9. Կոչում շնորհելու վերաբերյալ հիմնավորված առաջարկությունը հանձնաժողովը ներկայացնում է Լիազոր մարմնի ղեկավարին:

10. Հանձնաժողովի կողմից կոչում շնորհելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում փաստաթղթերը մեկ շաբաթվա ընթացքում վերադարձվում են ներկայացնողին:

4. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչում է շնորհվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում առնվազն քսան տարի աշխատած, բարձր որակավորում ունեցող աշխատողներին՝ իրենց պրակտիկ գործունեության, մարզական հերթափոխի պատրաստման, առողջ սպրեյակերպի և սպորտի պրոպագանդման համար, ինչպես նաև այն անձանց, ովքեր ակտիվորեն աջակցել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը հանրապետությունում:

5. «ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ» ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչում է շնորհվում այն անձանց, ովքեր օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բազմիցս հասել են մարզական խոշոր նվաճումների, նպաստել են միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հեղինակության բարձրացմանը և գրավել են՝

- 1) օլիմպիական խաղերում 1-3 տեղը.
- 2) աշխարհի առաջնությունում 1-ին տեղը:

6. ԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԸ

13. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կամ «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչմանն արժանացած անձանց տրվում է Լիազոր մարմնի կողմից հաստատված ձևի վկայական և կրծքանշան: «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչմանն արժանացած անձանց տրվում է նաև Լիազոր մարմնի կողմից հաստատված ձևի շնորհագիր:

14. Վկայականի, շնորհագրի և կրծքանշանի ձեռքբերման ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

15. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կամ «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչման վկայականը կորցնելու դեպքում տրվում է վկայականի կրկնօրինակը՝ դիմումի և Լիազոր մարմնի վարած գրանցամատյանում կատարված գրանցման հիման վրա:

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Էլոյան

**Հավելված N 2
ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի
2009 թ. սեպտեմբերի 17-ի
N 3-Ն հրամանի**

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՈՉՄԱՆ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ,
ՎԿԱՅԱԿԱՆԻ ՈՒ ՇՆՈՐՀԱԳՐԻ ԵՎ «ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ» ԿՈՉՄԱՆ
ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԵՐԸ**

Ձև 1



Մ 1:1



Մ 3:1





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ
ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

թվականի N _____ հրամանով

Շնորհված է


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ԵՎ

ՊԱՏՎԱԿՈՐ ԱՇԽԱՏՈՂԻ

կոչում

Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ
Նախարար



	 <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</p> <p>ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ</p>
--	--

 <p>ՎԿԱՅԱԿԱՆ N 001 ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏԻ ԿՈՉՈՒՄ ԵՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p>	<p>_____ Անուն</p> <p>_____ Հայրանուն</p> <p>_____ Ազգանուն</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵ</p> <p>_____ քվակազմի</p> <p>N _____ հրամանով</p> <p>Ընդրիված է ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏԻ կոչում</p> <p>Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ Նախարար</p>
---	---

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՈՉՄԱՆ
ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Կրծքանշանը պատրաստվում է արծաթից՝ դրոշմման եղանակով և ամբողջությամբ ոսկեջրվում է: Կրծքանշանի ալիքածն 2,5 սմ երկարությամբ և 1 սմ լայնությամբ զոլակի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության դրոշը: Զոլակի եզրերը ոսկեջրվում են: Զոլակը կապողակով ամրացված է 3,5 սմ տրամագծով շրջանին, որի վերևի կիսաշրջանի մասում ուռուցիկ տառերով գրված է՝ «ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»: Դրանից ներքև նախարարության խորհրդանիշն է: Իսկ ներքևի կիսաշրջանի մասում ուռուցիկ տառերով գրված է՝ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ»: Շրջանի կենտրոնական մասում Արարատ լեռան ռճավորված ուրվագիծն է, լեռան լանջին՝ ասպարեզը խորհրդանշող մարզադաշտի գրաֆիկական պատկերը և դրա աջ մասում՝ դափնեճյուղը, որով ավանդաբար պարգևատրվել են հաղթողները՝ տարբեր ասպարեզի գործիչներ՝ սկսած դեռևս հին Հունաստանի ժամանակներից մինչ օրս:

**«ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ» ԿՈՉՄԱՆ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՀԱԿԻՐՃ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Որպես հիմնական տարրեր օգտագործված են Հայաստանի Հանրապետության դրոշը, դափնեպսակը, որով ավանդաբար պարգևատրվել են հաղթողները՝ տարբեր ասպարեզի գործիչներ՝ սկսած դեռևս հին Հունաստանի ժամանակներից մինչ օրս:

Կրծքանշանը պատրաստվում է 28 մմ երկարությամբ և 26 մմ լայնությամբ արծաթից՝ դրոշմման եղանակով, կրծքանշանի աջ և ձախ կողմերը եզերող դափնեճյուղերը ոսկեջրվում են: Կրծքանշանի վերևի մասում Հայաստանի Հանրապետության ալիքածն դրոշի պատկերն է: Կրծքանշանի կենտրոնական մասում ուռուցիկ մեծ տառերով գրված է՝ «ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏ»:

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Էլոյան